ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 767-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Տարոն Վրեժի Սիմոնյանի (ծնված՝ 1974 թվականի նոյեմբերի 21-ին) 2020 թվականի սեպտեմբերի 24–ի դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0341-0033 կադաստրային համարի 597,4 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու և նշված հողամասում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15092020-07-0103, տրված 2020 թվականի սեպտեմբերի 15-ին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ–ի կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի օգոստոսի 4–ի թիվ 03/25.2/2032-2021 գրությունը):

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Տարոն Վրեժի Սիմոնյանը սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07–057–0341–0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 597,4 քառ.մետր մակերեսով հողակտորում 2017–2019 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տուն 1–ին հարկ՝ 70,9 քառ.մետր, 2–րդ հարկ՝ 70,9 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 4,5 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 1.61 քառ.մետր, թիվ 2 ծածկ՝ 32,04 քառ.մետր, թիվ 3 պարիսպ՝ 5,67 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ Տարոն Վրեժի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0341-0033 կադաստրային համարի հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Տարոն Վրեժի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07–057–0341–0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 597,4 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Տարոն Վրեժի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07–057–0341–0033 կադաստրային համարի 597,4 քառ.մետր մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 3-րդ թաղամաս, թիվ 10/52:

3.Տարոն Վրեժի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 10/52 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տուն 1–ին հարկը՝ 70,9 քառ.մետր, 2–րդ հարկը՝ 70,9 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 4,5 քառ.մետր, աստիճանավանդակը՝ 1.61 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 32,04 քառ.մետր, թիվ 3 պարիսպը՝ 5,67 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

4.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 688 002 (երկու միլիոն վեց հարյուր ութսունութ հազար երկու) Հայաստանի Հանրապետության դրամ, N 900105228218 հաշվին՝ 443 394 (չորս հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման չորրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Տարոն Վրեժի Սիմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 766-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հակոբ Սանասարի Դանիելյանի (ծնված՝ 1949 թվականի հուլիսի 1-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի օգոստոսի 27-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր այգետարածք 14–րդ տեղամաս թիվ 31 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 10–ին տրված թիվ Հ–17687 արխիվային տեղեկանքը և «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ–ի կողմից 2021 թվականի օգոստոսի 26-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ–ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հակոբ Սանասարի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր այգետարածք 14–րդ տեղամաս թիվ 31 հասցեի հողակտորում 1993 թվականներին ինքնակամ կառուցվել է նկուղ՝ 92,99 քառ.մետր, 1-ին հարկ՝ 103,91 քառ.մետր, ձեղնահարկ՝ 98,99 քառ.մետր և ծածկ՝ 1,62 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հակոբ Սանասարի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր այգետարածք 14–րդ տեղամաս թիվ 31 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կիսանկուղը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Հակոբ Սանասարի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուր այգետարածք 14–րդ տեղամաս թիվ 31 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր այգետարածք, 14-րդ տեղամաս, թիվ 31:

2.Հակոբ Սանասարի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 14-րդ տեղամասի թիվ 31 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված նկուղը՝ 92,99 քառ.մետր, 1-ին հարկը՝ 103,91 քառ.մետր, ձեղնահարկը՝ 98,99 քառ.մետր և ծածկը՝ 1,62 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հակոբ Սանասարի Դանիելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 765-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հովհաննես Ավետիսի Հովհաննեսյանի (ծնված՝ 1953 թվականի սեպտեմբերի 4-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 30-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ, Ջրվեժ 17–րդ թաղամաս թիվ 6 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինչպես նաև օրինականացնել 1 միջհարկային ծածկի և 2 պատուհանի բացվածքները (հիմք՝ սեփականության վկայագիր, տրված 1997 թվականի նոյեմբերի 11-ին, անհատ ձեռնարկատեր Սուրեն Շախյանի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 22-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Սուրեն Շախյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հովհաննես Ավետիսի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ջրվեժ 17–րդ թաղամաս թիվ 6 հասցեի հողամասում 2018–2019 թվականներին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 37,0 քառ.մետր, ծածկ՝ 17,3 քառ.մետր, օժանդակ շինություն՝ 1,2 քառ. մետր և պարիսպ՝ 2,29 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա են 1 միջհարկային ծածկի և 2 պատուհանի բացվածքներ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հովհաննես Ավետիսի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ջրվեժ 17–րդ թաղամաս թիվ 6 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների և բացվածքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Հովհաննես Ավետիսի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ջրվեժ 17–րդ թաղամաս թիվ 6 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին այգեգործական զանգված, 17-րդ թաղամաս, թիվ 6:

2.Հովհաննես Ավետիսի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1–ին այգեգործական զանգված, 17–րդ թաղամաս թիվ 6 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 37,0 քառ.մետր, ծածկը՝ 17,3 քառ.մետր, օժանդակ շինությունը՝ 1,2 քառ.մետր և պարիսպը՝ 2,29 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև 1 միջհարկային ծածկի և 2 պատուհանի բացվածքները, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի

N 912-Ն որոշմամբ հաշվարկված 121 530 (մեկ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հովհաննես Ավետիսի Հովհաննեսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» սեպտեմբերի 2021 թվականի N 764-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Աշոտ Կորյունի Ասլանյանի (ծնված՝ 1956 թվականի հունվարի 2-ին) և Նաիրա Կորյունի Ասլանյանի (ծնված՝ 1962 թվականի հուլիսի 4-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի օգոստոսի 16-ի դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ-հին այգետարածքի 18-րդ թաղամասի թիվ 12 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, վավերացված 2011 թվականի օգոստոսի 11-ին, «Էվրլայն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի օգոստոսի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Էվրլայն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Աշոտ և Նաիրա Ասլանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ-հին այգետարածքի 18-րդ թաղամասի թիվ 12 հասցեի հողակտորում 1980-2011 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տուն նկուղ՝ 71,1 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 6,1 քառ.մետր, 1-ին հարկ՝ 48,1 քառ.մետր, հարթակ աստիճանավանդակ՝ 15,8 քառ.մետր, ձեղնահարկ՝ 48,1 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 3,0 քառ.մետր և թիվ 2 ծածկ՝ 48,9 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացի Աշոտ Կորյունի Ասլանյանի դիմումում նշված և «Էվրլայն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 և 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Աշոտ և Նաիրա Ասլանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ-հին այգետարածքի 18-րդ թաղամասի թիվ 12 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Աշոտ և Նաիրա Ասլանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ-հին այգետարածքի 18-րդ թաղամասի թիվ 12 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին այգեգործական զանգված, 18-րդ թաղամաս, թիվ 12:

2.Աշոտ և Նաիրա Ասլանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին այգեգործական զանգվածի 18-րդ թաղամասի թիվ 12 հասցեի հողամասում 1980 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տուն նկուղը՝ 71,1 քառ.մետր, աստիճանավանդակը՝ 6,1 քառ.մետր, 1-ին հարկը՝ 48,1 քառ.մետր, հարթակ աստիճանավանդակը՝ 15,8 քառ.մետր, ձեղնահարկը՝ 48,1 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 3,0 քառ.մետր և 2011 թվականին ինքնակամ կառուցված թիվ 2 ծածկը՝ 48,9 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի

N 912-Ն որոշմամբ հաշվարկված 67 952 (վաթսունյոթ հազար ինը հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աշոտ և Նաիրա Ասլանյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» սեպտեմբերի 2021 թվականի N 763-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Հայկ Հովհաննեսի Մխիթարյանի և Կարեն Գուրգենի Դավթյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին և Կարեն Գուրգենի Դավթյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0384-0058 կադաստրային համարի հողակտորում գտնվող անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին թաղամաս, թիվ 40:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին և Կարեն Գուրգենի Դավթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» սեպտեմբերի 2021 թվականի N 762-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հայկուշ Բարսեղի Հայրապետյանի (ծնված՝ 1936 թվականի փետրվարի 2-ին) և Սեյրան Նադոյի Հայրապետյանի (ծնված՝ 1939 թվականի մարտի 1-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 150 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և ավել օգտագործվող 280,1 քառ.մետր մակերեսով հողամասը (հիմք՝ քաղվածք Ձորաղբյուր գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 23–ի թիվ 10 որոշումից, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի օգոստոսի 20-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հայկուշ և Սեյրան Հայրապետյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 150 հողակտորում 1961-1965 թվականներին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 496,4 քառ.մետր, հավաբուն՝ 9,1 քառ.մետր, թոնրատներ՝ ընդհանուր 32,5 քառ.մետր, ավտոտնակ՝ 21,7 քառ.մետր արտաքին մակերեսներով և նրանց կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 1280,1 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 1000,0 քառ.մետր մակերեսի փոխարեն (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացիներ Հայկուշ և Սեյրան Հայրապետյանների դիմումում նշված և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթվերը):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հայկուշ և Սեյրան Հայրապետյանների կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի հաստատված գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, ինչպես նաև Հայկուշ և Սեյրան Հայրապետյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 150 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի Չորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 150 հասցեի օրինական 1000,0 քառ.մետր հողամասին կից 280,1 քառ.մետր հողամասի չափով ճանաչել Հայկուշ և Սեյրան Հայրապետյանների սեփականության իրավունքը:

2.Սույն որոշման 1-ին կետով նշված 200,0 քառ.մետր հողամասից ավել օգտագործվող 80,1 քառ.մետր մակերեսով հողամասը համարել Հայկուշ և Սեյրան Հայրապետյանների սեփականությունը՝ հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով համայնքի բյուջե վճարում կատարելուց հետո, որը կազմում է 164 229 (մեկ հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր քսանինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հայկուշ և Սեյրան Հայրապետյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Չորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 150 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 496,4 քառ.մետր, հավաքռունը՝ 9,1 քառ.մետր, թոնրատները՝ ընդհանուր 32,5 քառ.մետր, ավտոտնակը՝ 21,7 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկուշ և Սեյրան Հայրապետյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 29
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» սեպտեմբերի 2021 թվականի N 761-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Յուրա Պյոտրի Սարգսյանի (ծնված՝ 1979 թվականի նոյեմբերի 21-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02042019-07-0103 վկայականը, տրված 2019 թվականի ապրիլի 2-ին, անհատ ձեռնարկատեր Սուրեն Շախյանի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Սուրեն Շախյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Յուրա Պյոտրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ ընդհանուր 376,4 քառ.մետր, ավտոտնակ՝ 62,9 քառ.մետր, օժանդակ շինություններ՝ ընդհանուր 5,9 քառ.մետր, ծածկեր՝ ընդհանուր 51,4 քառ.մետր և պարիսպ՝ 3,9 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Յուրա Պյոտրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Յուրա Պյոտրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ ընդհանուր 376,4 քառ.մետր, ավտոտնակը՝ 62,9 քառ.մետր, օժանդակ շինությունները՝ ընդհանուր 5,9 քառ.մետր, ծածկերը՝ ընդհանուր 51,4 քառ.մետր և պարիսպը՝ 3,9 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1 228 594 (մեկ միլիոն երկու հարյուր քսանութ հազար հինգ հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Ծաղկույանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Յուրա Պյոտրի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» սեպտեմբերի 2021 թվականի N 760-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Բենուր Երջանիկի Փիլոյանի (ծնված՝ 1994 թվականի մայիսի 12-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 24-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված սան.հանգույցը, ինչպես նաև գույքը բաժանելու երկու առանձին մասերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27082021-07-0152 վկայական, տրված 2021 թվականի օգոստոսի 27-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 16-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Բենուր Երջանիկի Փիլոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողամասում 2019 թվականին ինքնակամ կառուցվել է սան.հանգույց՝ 31,47 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Բենուր Երջանիկի Փիլոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված սան.հանգույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Բենուր Երջանիկի Փիլոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված սան.հանգույցը՝ 31,47 քառ.մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

2.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 31-րդ փողոցի թիվ 5 հասցեից բաժանված S1=500,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 31-րդ փողոց, թիվ 5/1, S2=540,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, Ջրվեժ գյուղ, 31-րդ փողոց թիվ 5:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 60 536 (վաթսուն հազար հինգ հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գևորգ Գևորգյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Բենուր Երջանիկի Փիլոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» սեպտեմբերի 2021 թվականի N 759-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արմեն Արթուրի Մուրադյանի (ծնված՝ 1989 թվականի հոկտեմբերի 31-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորապսակների թաղամաս 1–ին փողոց թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը, ինչպես նաև գույքը բաժանելու երկու առանձին մասերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23052012-07-0236 վկայական, տրված 2012 թվականի մայիսի 23-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 27-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արմեն Արթուրի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորապսակների թաղամաս 1–ին փողոց թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցել է պարիսպ՝ 16,5 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արմեն Արթուրի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորապսակների թաղամաս 1–ին փողոց թիվ 6 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված պարիսպը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, պարիսպը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արմեն Արթուրի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորապսակների թաղամաս 1–ին փողոց թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը՝ 16,5 քառ.մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

2.Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորապսակների թաղամաս 1–ին փողոց թիվ 6 հասցեից բաժանված S1=500,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Նորապսակների թաղամաս, 1–ին փողոց, թիվ 6, S2=500,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Նորապսակների թաղամաս, 1–ին փողոց, թիվ 6/1:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 19 494 (տասնինը հազար չորս հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Արթուրի Մուրադյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» սեպտեմբերի 2021 թվականի N 758-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանը և Կոտայքի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի 01/08.2/06131-2021 և 2021 թվականի սեպտեմբերի 28-ի 01/08.2/06200-2021 գրությունները, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 17-ի «Միջոցառումների համակարգման շտաբ և արագ արձագանքման թիմ ստեղծելու մասին» թիվ 160-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «Կորյուն Կարապետյան» բառերը փոխարինել «Կարեն Խաչատրյան» բառերով, 2-րդ ենթակետում «Հուսիկ Գրիգորյան» բառերը փոխարինել «Էլլա Հայրապետյան» բառերով,

2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «3)»-րդ ենթակետով.

«3)Գրանցամատյանի վարման պատասխանատու նշանակել աշխատակազմի առաջատար մասնագետ, առողջապահության ոլորտը համակարգող՝ Նաիրա Ալբերտի Քոչարյանին:»:-

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 28
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 757-Ա

## ՆՈՒՌՈՒՇԿԱ ՍՄԲԱՏԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 7-րդ փողոցի թիվ 24 տան բնակիչ Նուռուշկա Սմբատի Թովմասյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ 2021 թվականի սեպտեմբերի 17-ին մահացել է ամուսինը՝ Գրիշա Արսենի Թովմասյանը, ինքը թոշակառու է, ներկայումս բնակվում է ընտանիքի մեկ անձով և իր ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Նուռուշկա Սմբատի Թովմասյանին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նուռուշկա Սմբատի Թովմասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 756-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 01/08.2/06131-2021 գրությունը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը և գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 258-Ա որոշման N 1 հավելվածի 27-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «$27^1$- $27^5$-րդ» կետերով.

« $27^1$.Աշխատակազմի քարտուղարին.

1)ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը Աշխատակազմում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի (ծառայության) ներկայանալիս.

2)ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը:

$27^2$.Համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր կլինի խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:

$27^3$.Հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են աշխատանքի (ծառայության) ներկայանալիս Աշխատակազմի քարտուղարին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

$27^4$.Մինչև վերոնշյալ $27^3$-րդ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը, յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:

$27^5$.Սահմանել ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրություն (զեկուցագիր և այլն) ներկայացնելու հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետ և նախատեսել նման բացատրության (զեկուցագրի և այլն) գրավոր ներկայացման պահանջը:»

2.Սույն որոշման կատարման պատասխանատու սահմանել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 755-Ա

## ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Արմեն Սուրենի Սարոյանին, Գրիգոր Սուրենի Սարոյանին և Լյուդմիլա Գեորգիի Ավլաստիմովային ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին այգեգործական զանգվածի 1/1 թաղամասի թիվ 27 հասցեի հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10082021-07-0166 վկայականում նշված թիվ 1 այգետնակը՝ 48,2 քառ.մետր մակերեսներով:

2.Քաղաքացիներ Արմեն Սուրենի Սարոյանին, Գրիգոր Սուրենի Սարոյանին և Լյուդմիլա Գեորգիի Ավլաստիմովային տալ կիսանկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և ամառային խոհանոցի կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին այգեգործական զանգվածի 1/1 թաղամասի թիվ 27 հասցեի հողամասում:

3.Պարտավորեցնել Արմեն Սուրենի Սարոյանին, Գրիգոր Սուրենի Սարոյանին և Լյուդմիլա Գեորգիի Ավլաստիմովային՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Սուրենի Սարոյանին, Գրիգոր Սուրենի Սարոյանին և Լյուդմիլա Գեորգիի Ավլաստիմովային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 754-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.«Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ին տալ L=127,0 գծմ 0,4 ԿՎՏ մալուխագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ դեպի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի՝ Թերեզա Պետրոսյանին պատկանող հողամասի էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 753-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հովհաննես Արմենի Դանգյանին տալ մեկ հարկանի բնակելի տան և ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 25-րդ փողոցի թիվ 27 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Հովհաննես Արմենի Դանգյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հովհաննես Արմենի Դանգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 752-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Վալերիկ Գառնիկի Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 68/1 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վալերիկ Գառնիկի Մալխասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 751-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Թամարա Արսենի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 56-րդ փողոցի թիվ 4 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ կիսանկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Թամարա Արսենի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 750-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Արթուր Ռաֆիկի Գրիգորյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Արթուր Ռաֆիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 32 հասցեի տնամերձ հողակտորից բաժանված 500,6 քառ.մետր մակերեսով թիվ 2 հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 32/1, թիվ 1՝ 1460,0 քառ.մետր մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 32:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Արթուր Ռաֆիկի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» սեպտեմբերի 2021 թվականի N 749-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Հասմիկ Վազգենի Բաղդասարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Հասմիկ Վազգենի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 20–րդ փողոցի թիվ 8 հասցեի տնամերձ հողակտորից բաժանված 243,6 քառ.մետր մակերեսով թիվ 2 հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 20–րդ փողոց, թիվ 8/1, թիվ 1՝ 875,3 քառ.մետր մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 20–րդ փողոց, թիվ 8:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Հասմիկ Վազգենի Բաղդասարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 27
գ. Ջրվեժ